հատվածը...» (ընդգծումը բնագրում–Ա.Ն.)[50]: Դավրիժեցուն, ահա, հետաքրքրել են հենց այդ պատմական հատվածները, և ներբերված ձեռագրերի հիշատակարանները նրա պատմագրքում մեծ մասամբ ներկայանում են իրենց ժանրային նկարագրի այդ մասով:

Հատկապես «Պատմութիւն վասն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի Աջին» վերնագրով Լ գլխում է Դավրիժեցին առատորեն մեջբերում ձեռագրերի հիշատակարաններ: Եվ դա պատահական չէ, քանզի այդ գլուխը, ինչպես արդեն նշվել է՝ այսպես կոչված՝ «լրագրողական հետաքննություն» է իրենից ներկայացնում: Ձեռագրերի հիշատակարաններին բնորոշ տարաբնույթ տեքստային, բովանդակային օրինաչափություններից բացի, Լ գլխում բերված ձեռագրերի հիշատակարանները հատկանշվում են նրանով, որ դրանցից յուրաքանչյուրում առկա է որևէ տեղեկություն Գրիգոր Լուսավորչի աջի մասին, ինչպես՝ «...քանզի յայսմ ամի վերացեալ եղև Աջն ի Սսայ, և ո՛չ գիտեմք զինչ եղև» (էջ 328), «...զի Աջն սուրբ Լուսաւորչին անտի գողացան, և երկու ամ ազգս Հայոց անտերունջ մնաց» (էջ 328–329), «...զի մինչ ի սոյն ամս Աջն Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Սիս էր» (էջ 330), և այլն:

Այս ամենին հավելենք նաև, որ Դավրիժեցու խնամքոտ և ուշադիր աչքը պատմագրքում ներբերել է նաև որոշ վիմագիր արձանագրություններ՝ կորստից փրկելու մտահոգությամբ: «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի: Յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և յայտնելոյ նշխարաց նոցին» վերնագրով ԻԵ գլխում, օրինակ, վկայագրելով սուրբ կույս Հռիփսիմեի նշխարները գտնելու պատմությունը, Դավրիժեցին հիշատակում է նշխարների համար կառուցված փոքրիկ մատուռի պատերին

---

[50] ***Հենրիկ Բախչինյան,*** Ձեռագրերի հիշատակարաններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Երևան, 1984, էջ 399: